

մէկն է վարդան Այգեկցին. ծանօթ իր առականերով ու բանաստեղծական քարոզչներովը: Ուսած է Արքակաղնի վանքին մէջ: Բնակութեամբ յանդուգն և չարը խարազանող մէկը ըլլալուն, շրջած է աստանդական Տըքոյ գաւառի զանազան վանքերու ու միայնակեացներու մօտ, և վերջապէս հաստատուած է Այգեկ վանքը:

Այգեկ վանքը շինուած է 1166 թ. Մարաշի արեւմուտքը, Տօնկալա շրջանին մէջ. արդի Եէնիճէ գալէ—Մուճուզտէրէսի կոչուած տեղը:

Այգեկ վանքին տեղը հիմա զրաւուած է Քափուշին ֆրէշներու կողմէ և կառուցուած է երկու հսկայ վանքեր ընդարձակ այգեհատաններով, պարտէզներով. բայց դեռ նշմարելի են այգեհատանի մը մէջ փլատակուած շէնքերու աւերակներ, որոնք կը կարծեմ ըլլան բուն իսկ Այգեկի վանքին հնութիւնները: Պրանք ֆրէշները թէ և իրենց վանքին շինութեանը համար գործածած են անոր սրբատաշ քարերը, բայց դեռ հաւանականութիւն կայ որ պեղումները կարենան նորութիւններ երեւան բերել, այս մեր անուանի վանքի ճարտարապետութեան մասին:

Աւելորդ չ'ըլլար կը կարծենք այս նշանաւոր առակախօսին վարդան Այգեկցիի երկու առակները հոս արտագրել.

Ա. — Գայլուն խրատ տալին և աւել տարան կարդալին թէ ալ ոչխար և պախրէ մի խեղդեր: Եւ ասէ գայլն, շտապէ ու շուտ կարգայ զաւետարանդ, զի գեհն (ոչխարի հօտ) անցաւ ընդ սարն:

Յուցանէ թէ այսպէս են որդիք մարդկան, որ ոչ լսեն խրատու աւետարանին, այլ միտք նոցա ի չարութեան և յափշտակութեան են, որպէս զգայլն գայն:

Բ. — Զի կին որ հանէ ի բնական կերպէն զոր ստեղծ արարիչն զպատկերս իւր, և շինէ դեղօք զպատկերն և զաչան, նայ ոչ տեսանէ զլոյս խաչին յաւուրն մեծ:

ՔԱՂԱՔՆ ՈՐ ԿՈՉԻ ՀՈՆԻ. — Հոնի քաղաքը

կը գտնուի Զահան գաւառին մէջ: Աւարտութեան հինգ ժամ հեռութեամբ վրայ դէպի հիւսիս «Խուրման Գալէ» ի ստորոտը: Հոնի մէջ մենք ունեցանք երկու կաթողիկոսներ, Պետրոս Գետադարձի քրդերն Սարգիս կաթողիկոսը, և Թէոդորոս Ալախօսիկ կաթողիկոսը: Այս երկու կաթողիկոսները իրարու յաջորդելով մօտաւորապէս տասնհինգ տարիներ աթոռանիստ կաթողիկոսարան ըրին Հոնին: Որով կը տարուին հաւատարու թէ կաթողիկոսական դիրքին վայել վանք մը շինած ըլլան այս քաղաքին մէջ, նա մանաւանդ երբ Սարգիս կաթողիկոսի պէս մեծահարուստ մէկն է այդ կաթողիկոսներէն մէկը:

Հոնին այժմ փոքր քրդաբնակ գիւղ մըն է, Եւրփուզ հայկական գիւղաքաղաքէն հազիւ երեք քառորդ ժամ հեռութեամբ մը վրայ: Գիւղին մէջ ուշըջակաները կը գտնուին աւերակներ, ճերմակ մարմարիոնէ յղկուած քարերը հողին երեսին վրայ կը հանգչին անորոր:

Հնախօսական ոչ մէկ աշխատանք կատարուած է:

* * *

Մենք, ինչպէս նախապէս ըսինք, տուինք մեր ականատեսի տպաւորութիւնները մեզի ծանօթ վանքերուն, և ըրինք անոնց տեղագրականը: Դեռ ունինք կիլիկեան նշանաւոր այլ վանքեր՝ որոնք նոյնպէս կը կարօտին հետախուզական քննութիւններու: Այս վանքերու մէջ նշանաւորներն են Ակներ, Արքակաղնի, Գրազարիկ, Խորին, Մաշկեւոր և դեռ ուրիշներ, որոնց մասին խօսելու առիթը պիտի ունենանք, նոյնպէս բերդերու ու ամրոցներու մասին և հայկական արձանագրութեանց, որոնք կը գտնուին Կիլիկիոյ մէջ:

ՏՈՔԹ. Յ. ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ

Հալէպ

ԿԱՐՄԻՐ ԳԵՏԸ

ԲԺ. Մանուկ խանդակեան հրատարակած է Կարմիր Գետը անունով տրամ մը, որու նիւթը առնուած է 1914—1915ի մեծ եղեռնի դէպքերէն վերապրող երկու հայուհիներու կեանքէն, երկուքն ալ հարկադրուած դոյութիւններն քաշկոտել իրենց ընտանիքի դահիճներու յարկին ներքեւ՝ դիւղի մը միայնութեան մէջ:

Հեղինակը իր տրամի նիւթին չի մօտենար դրական նպատակներով, եւ ոչ ալ փափաքած է արուեստագէտի շարք մը ծայել այդ ցաւատանջ կեանքին տխրորակ դէպքերուն: Սակայն այդ պարզունակ կեանքը իր մեղմութեան մէջ՝ ինչպէս որ կը ներկայանայ այդ գիւղացնակ հոգիներուն մէջ, ունի այնպիսի թարմութիւն, ջերմութիւն ու ներքին ոյժ, որ շնորհք ու դեղեցիկութիւն ստացեր է: Գործողութիւնը բնական եւ արագ, խօսակցութիւնը նկարագիր եւ հոգեկան վիճակներ արտայայտող, եւ միշտ աշխոյժ: Բայց ինչ որ այդ բոլորին մէջ աւելի կ'ազդէ մեր վրայ, ու տրամին կու տայ թափանցող յուզականութիւն մը եւ տեսակ մը մեծութիւն, ցեղին հրայրքն է, ցեղին սէրը՝ որով բոցավառուած են այդ միամիտ հայուհիները, եւ ատ է որ իրենց եղբարախտ դոյութեան դեռ իմաստ մը կու տայ: Ցեղին հրայրքը՝ որ միայն առհաւութիւն կամ միս ու ոսկոր չէ, այլ միտք ու սիրտ է, հոգի է՝ յաւիտենական ըլլալու համար: Կը խորհիմ թէ հեղինակը երկար տարիներ կրած պիտի ըլլայ իր մէջ այդ միեւնոյն հոգին՝ իր հայրենապուրկի կեանքի ընթացքին՝ իրր զերազոյն իրականութիւն մը:

Նաղէ՛ հայուհիներէն մէկը, բարեսիրտ, հանդարտաբարոյ ու հեղաճամբոյր է,

այլեւս համակամ նաեւ իր վիճակին: Սակայն, երբ բռնի իրեն տիրանալ կը փորձեն, կը դառնայ ամենի ու սպաքարող, եւ ուժգնօրէն կը դիմադրաւէ՝ զօրացած իր ցեղային բարոյական կորուովը:

Հուրիկ՝ աւելի տարէց, դիտակից է նաեւ իր ողբալի վիճակին, բայց իր մէջ թաքուն ցեղային ոյժը՝ միշտ լարուած եւ պոռթկալու վիճակի մէջ, յարմար ժամանակի կը սպասէ յայտնուելու: Իր դէնքը խենթութիւնն է, ու յիմարի դիմակին տակ ամէն տեսակ ճշմարտութիւն աներկիւղ կը յայտնէ իր դահիճներուն՝ առանց վնասելու անձին. հուսկ կը յաջողի հասնիլ իր նպատակին՝ մահացնելով ամենամեծ դահիճը:

Հուրիկ անշուշտ Հայ ողին չ'անճաւորեր, բայց կը պատկերացնէ ազատազրկուած Ողին, որ մինչեւ իսկ խենթութեան դիմակին տակ համբերութեամբ կը կրէ նուաստացուցիչ վիճակի մը բովանդակ դառնութիւնը, հուսկ կարենալու համար իր գաղափարականը իրականացնել:

Հայ ցեղին յաւերժանալու ոյժն է՝ մինչեւ իսկ իր տկար ու համեստ դաւակներուն մէջ:

Գուցէ հեղինակը այս տրամը յօրինելով խորհած ըլլայ, որ եթէ Հայը Վեհաժողովներու եւ Ազգերու Ընկերութեանց փոխանակ դիւանագէտի՝ ներկայանար խենթութեան դիմակին ներքեւ, հաւանօրէն աւելի բան մը ձեռք ձգած ըլլար:

Հ. Կ. Ք.

ՄԱՆՈՒԿ ԽԱՆԴԱԿԵԱՆ. — Կարմիր Գետը. տրամ երեք արարով. — մեր օրերուն. — Վենետիկ, Միլիթարեան տպ., 1952: